



**ՀԱՅԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**



**MILLENNIUM
CHALLENGE CORPORATION**
UNITED STATES OF AMERICA

Մասյո հաղորդագրություն

10 ապրիլի, 2010

**Մենք կառուցում ենք, մենք բարեկարգում ենք
ՀՄՀ-Հայաստանի ապրիլի 10-ի միջոցառումը**

Երևան, Հայաստան – 2010թ.-ի ապրիլի 10-ին Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ – Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) յուրօրինակ միջոցառմամբ նշանավորեց Արարատի մարզի Նորաբաց համայնքի ներտնտեսային ոռոգման ջրանցքի 550 մետր երկարությամբ հատվածի վերականգնման ավարտը: Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման ՀԿ-ի և Արևոդի Էկո-ակումբի հետ համատեղ, ՀՄՀ-Հայաստանը և գործընկեր կազմակերպությունները նախաձեռնեցին ջրանցքին հարող տարածքի մաքրման և ծառատունկի միջոցառում, որի շրջանակներում ջրանցքի երկայնքով տնկվեց 150 ծառ:

Միջոցառման նպատակն էր ընդգծել ՀՄՀ-Հայաստանի կողմից կարևորվող բնապահպանական գործառնությունները և խթանել ոռոգման ենթակառուցվածքների ու դրանց շրջակա միջավայրի պահպանման համար համատեղ պատասխանատվության կարևորությունը: ՀՄՀ-Հայաստանը մշտապես մեծ կարևորություն է տալիս ինչպես շինարարական, այնպես էլ ծրագրային այլ բաղադրիչների բնապահպանական կողմին՝ մաքրելով շինհրապարակները և, հնարավորության դեպքում, տնկելով ծառեր:

Ջրանցքի բացման և բնապահպանական ակցիայի միավորումը մեկ միջոցառման ներքո միտված է ընդգծել կանաչ տարածքների ավելացման կարևորությունը և ջրանցքների աղտոտման վնասները, բևեռել ինչպես ծրագրին առնչվող մասնագետների, այնպես էլ համայնքի և լայն հանրության ուշադրությունը այն հանգամանքին, թե որքան կարևոր է բնության և մասնավորապես ոռոգման ջրի հանդեպ հոգատար և պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը:

Միջոցառման հիմնական կարգախոսներն են՝ «Մենք կառուցում ենք, մենք բարեկարգում ենք», «Ինչու՞ մաքրել» և «Ինչու՞ ծառ տնկել»:

Միջոցառումը մակնարկեց բացման արարողությամբ, որին հաջորդեց մաքրման, ապա ծառատունկի ակցիան: Վերջում բաց թողնվեց ոռոգման ջրանցքի ջուրը: ՀՄՀ-Հայաստանի Գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը և Նորաբացի համայնքապետ Գալուստ Գալստյանը հուշագիր ստորագրեցին տնկված ծառերի հետագա պահպանության իրականացման վերաբերյալ:

Արմավիրի, Արարատի և Վայոց Ձորի մարզերի 14 համայնքում ՀՄՀ-Հայաստանի ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի շրջանակներում ներկայումս ընթանում են ոռոգման ներտնտեսային ջրանցքների վերականգնման աշխատանքներ: Նորաբացը (շուրջ 2000 բնակչով) առաջինն էր, որտեղ արդեն նորոգված ջրանցքում բաց թողնվեց ոռոգման ջուրը: Նախատեսվում է, որ նշված համայնքներից շատերը այս ոռոգման սեզոնի ընթացքում արդեն իսկ կօգտվեն նոր ջրանցքներից: Այս ջրանցքի վերականգնումը իրականացրել է «Երևանշին» ՍՊԸ-ն:

Մինչ 2011թ. սեպտեմբեր ամիսը Հայաստանի գյուղատնտեսության և ոռոգման ոլորտում ՀՄԿ-ի կողմից տրամադրվելիք ներդրումները կկազմեն 180 միլիոն ԱՄՆ դոլար: Լրացուցիչ տեղեկատվության ստանալու համար խնդրում ենք այցելել՝ www.mca.am:

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: